ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբերի 2020թ. N ՄՊ/454-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N ՄՊ/160-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ալաշկերտի Հ.Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 31, «Հացիկի Ավ.Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 80 գրությունները և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի պահանջները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՊ/160-2019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 9 հավելվածի 8-րդ կետում «Գևորգյան Էլմիրա» բառերը փոխարինել «Հովսեփյան Ալվինա » բառերով.
   2) որոշմամբ հաստատված N 29 հավելվածի 8-րդ կետում «Միքաելյան Սվետա» բառերը փոխարինել «Աղամելյան Արշայույս» բառերով.
   3) որոշմամբ հաստատված N 91 հավելվածի 2-րդ կետում «Հովհաննիսյան Վեմիր» բառերը փոխարինել «Վեզիրյան Արմեն» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ.Մաթևոսյան***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 03.12.2020 18:06:55 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230